№ 84 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 28 **1892** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 28 № 84

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարող էին անել.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պաշտօնական տեղեկութիւններ խօլէրայի մասին. Նամակ Շուշուց. Նամակ Նոր-Բայազէտից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պարսկաստան. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԿԱՐՈՂ ԷԻՆ ԱՆԵԼ

Թիֆլիսը ինքն իրան է օգնում ներկայ էպիդէմիայի ժամանակ, Թիֆլիսը ցոյց տուեց ամենքին ինքնագործունէութեան, ինքնօգնութեան մի գեղեցիկ օրինակ։ Թիֆլիսն այլ ևս պէտք չունի ոչ հայոց „Բարեգործական“ ընկերութեան, ոչ էլ „Հայուհեաց“ բարեգործական ընկերութեան օգնութեան։ Բայց գաւառները թշուառ դրութեան մէջ են, գաւառներում մարդիկ անօգնական դրութեան մէջ՝ հարիւրներով հիւանդանում և մեռնում են ամեն օր խօլէրայից. Գանձակի, Ջիվանշիրի, Զանգեզուրի, Հին-Նախիջևանի գաւառները վարակված են խօլէրայով և ոչ դեղ, ոչ դէզինֆէկցիական միջոցներ, ոչ էլ բժիշկ ունեն....

Այժմ գաւառներին պէտք է օգնել նախ՝ մարդասիրական զգացմունքից դրդված և երկրորդ՝ նոյն իսկ գործնական, բուն եսական տեսակէտից, որովհետև Թիֆլիսը, որը համարեա ազատվել է խօլէրայից, շնորհով ինքնօգնութեան սկզբունքի գործադրութեան, նորից կարող է վարակվել, երբ խօլէրան հետզհետէ տարածվելով գաւառներում նորից մի պատյտ կանի և նորից կը դայ մեր քաղաքը ու մեզ կրկին կը վարակի։

Բայց ի՞նչ կարող են անել մեր երկու բարեգործական ընկերութիւնները, կասեն մեզ. շատ մեծ գործ կարող են կատարել, եթէ ուզենան։

Թող օրինակ վերցնեն Թիֆլիսի վրայ կալուածական բանկից, որն իր հաշուով չորս բժիշկ է ուղարկել Թիֆլիսի նահանգի չորս գաւառները (մի մի բժիշկ իւրաքանչիւր գաւառ) խօլէրայի դէմ կռուելու համար։ Թող նոյնն անեն և մեր երկու բարեգործական ընկերութիւնները, որքան կը ներեն նրանց իրանց նիւթական միջոցները։

Լսվում է որ Թիֆլիսի հայոց „Բարեգործական“ ընկերութիւնը տալիս է իր պահեստի գումարից 5000 ռուբլի խօլէրայի դէմ մաքառելու համար։ Ահա, մեր կարծիքով, ինչ ամենագործնական միջոցով նա կարող է գործ դնել իր այդ նշանակած գումարը։ Նա կարող է վարձել հինգ բժիշկ, իւրաքանչիւրին, իր մի կամ երկու ֆելդշէրներով, ամսական 300 ռուբլի տալով (200 ռ. բժշկին և 50-ական երկու ֆելդշէրներին), այդպիսով երկու ամսվայ մէջ (յոյս կայ որ խօլէրան աւելի չի տևի) մի բժիշկի և երկու ֆելդշէրի վրա 600 ռուբլի ծախսելով, իսկ հինգ բժիշկների վրա, իւրաքանչիւրը իրանց երկու ֆելդշէրներով երկու ամսվայ մէջ՝ ընդամենը 3000 ռուբլի։ Մնացած 2000 ռուբլի թող գործածէ դեղեր և դէզինֆէկցիական միջոցներ գնելու վրա։

Մենք ասում ենք հինգ բժիշկ, որովհետև այս րոպէիս հինգ գաւառներ կան, որոնք զուրկ լինելով ամեն տեսակ միջոցներից, այժմ վարակված են արդէն խօլէրայով։ Այս գաւառներն են. Զանգեզուրի, Ջիվանշիրի, Գանձակի, Հին-Նախիջևանի և Երևանի գաւառը։

Եթէ չը գտնվեն բաւականաչափ բժիշկներ, կարելի է նրանց տեղ ուղարկել Պետերբուրգի բժշկական ակադէմիայի, կամ որ և է ռուսաց համալսարանի հինգերորդ կուրսի ցանկացող ուսանողներին, բժիշկների իրաւունքով (ինչպէս պատերազմի ժամանակ) գործելու համար։ Իսկ որ ուսանողներից ցանկացողներ կան, մենք այդ հաստատ գիտենք, քանի որ նամակներ ենք ստացել այդ տեսակ ուսանողներից, որոնք առաջարկում են թէ ջոկ ջոկ իրանց ծառայութիւնը խօլէրայի դէմ գործելու մեր անդրկովկասեան, մանաւանդ հայաշատ, նահանգներում և թէ պատրաստ են իրանց ընկերներից, բժշկական ուսանողներից կամաւորների խմբեր կազմակերպելու՝ իրանց հայրենիքում, Անդրկովկասում, գործելու և կարօտ ժողովրդին դեղ ու դարման տալու, նրա մասին հոգալու և երկրի առողջական դրութիւնը կարողութեան չափ բարւոքելու համար։ Բայց, ի հարկէ, նրանց պէտք է նիւթական օգնութիւն. իսկ վերոյիշեալ չափով նիւթական նպաստ կարող է նրանց առաջարկել մեր բարեգործական ընկերութիւնը։ Մենք ունենք ուսանողական խմբեր կազմակերպելու առաջարկող հինգերորդ կուրսի ուսանողներից մի քանիսների հասցէներ։

Իսկ մեր „Հայուհեաց“ բարեգործական ընկերութիւնը ի՞նչքան միջոցներ ունի, ի՞նչքան կարող է նպաստ տալ նոյն գործին,—մեզ յայտնի չէ։ Այդ երկրորդ ընկերութեան գործունէութիւնն առհասարակ, այնքան անորոշ, տատանվող և անյայտ է, որ դժուար է մի որ և է դրական բան ասել նրա մասին։ Բայց եթէ արական բարեգործական ընկերութիւնը հետևելով վրաց կալուածական բանկի գեղեցիկ օրինակին, դիցուք յանձն առներ մի չորս կամ հինգ գաւառներ ուղարկել բժիշկներ, միթէ մեր իգական բարեգործական ընկերութիւնը նոյն հաշուով մի հատ բժիշկ ու երկու ֆելդշէրներ չէր կարող ուղարկել մի որ և է վարակված գաւառ. դա շատ շատ, դեղերի հետ միասին, ընկերութեանը մի 800 ռուբլի փող կը նստէր։

Կամ եթէ „Հայուհեաց“ բարեգործական ընկերութիւնը այդ էլ էհ կամենում անել, գնէ մի որ և է բան անէր, մի որ և է գործ կատարէր, մի որ և է օգնութիւն հասցնէր, թէկուզ Թիֆլիսի էքաւոր աղքատաբնակութեան, յատկապէս այդ աղքատակուվեան իգական սեռին. և ահա ինչպէս։

Մենք ասեցինք արդէն, որ ձրի թէյանոցներից և ձրի կամ նոյն իսկ էժան ճաշարաններից կարող են օգտվել մեր քաղաքի էքաւոր աղքատաբնակութեան միմիայն տղամարդիկ, իսկ կանայք և երեխաներ տանն են նստում, առանց թէյի, առանց լաւ կերակուրի, շատ անգամ անօթի, որ շատ վնասակար և վտանգաւոր է էպիդէմիայի ժամանակ։ Մեր երկրի կինը (լինի դա հայ, վրացի, թէ թուրք) երբէք չի վստահանայ բնակարանից դուրս գալ ու նստել հրապարակապէս տղամարդկանց հետ միասին՝ բարեգործական միջոցներով տուած թէյը կամ ճաշը վայելելու համար։ Ուրեմն նա իր մանուկների հետ տան մէջ նստած՝ մեր ամեն այդ տուած բարիքներից զուրկ է մնում։

Ուրեմն, յարգելի տիկիններ, „Հայուհեաց“ բարեգործական ընկերութեան պատուելի անդամուհիներ, փոխանակ կամ մեծ մեծ գործեր երազելու, կամ ոչինչ չանելու,—մի բան, մի բարի գործ կատարեցէք։ Նշանակեցէք ձեր ընկերութեան կարողութեան չափ մի որոշ գումար (եթէ յոյս չունէք հանգանակութեամբ փող ժողովելու), և այդ գումարով գնեցէք թէյ, շաքար և դինի,—և այդ անհրաժեշտ մթերքները տարէք անից տուն բաժանելու.... Խմացէք, տեղեկացէք՝ ո՞րտեղ են կենում մեր ամենաաղքատ, ամենաէքաւոր ընտանիքները և ապա օգնեցէք նրանց. այդ բանն իմանալը և ապա գործ կատարելը ձեզ համար դժուար չի լինի, եթէ գործին գլուխ դնող լինեք ձեր մէջ, եթէ կամք ու տոկունութիւն ունենայիք, եթէ ուզենայիք գործ կատարել ժողովրդին ճշմարիտ օգուտ բերելու, և ոչ թէ գործէիք ձեր անձնական բաւականութեան համար և միմիայն ի ցոյց մարդկանց, եթէ վերջապէս տնից տուն մանգալով ժողովրդի էքաւորութեան չափն իմանալու նպատակով և ապա իրանց ողորմելի բնակարանի մէջ փակված նստած մեր էքաւոր կանանց ու մանուկներին թէյ, շաքար ու դինի բաժանելով էհէք վախենայ ձեր թարմ զգեստներն ու ձեր նուրբ կօշիկները կեղտոտելու....

Եթէ այդ բոլորը կարող էք անել,—արեցէք։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՕԼԷՐԱՅԻ ՄԱՍԻՆ

Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցում յուլիսի 24-ին առաւօտեան կային 5 տղամարդիկ և 4 կանայք. օրվայ ընթացքում աւելացել են 5 տղամարդիկ. մեռել է 1 կին. գիշերն աւելացաւ 1 կին։ Յուլիսի 25-ին առաւօտեան կային 9 տղամարդիկ և 4 կանայք։ Հիւանդանոցից դուրս յուլիսի 24-ին հիւանդացել են 2 և մեռել են 2 հոգի։ Յուլիսի 24-ին առաւօտեան զինուորական հիւանդանոցում կային 23 հիւանդներ, աւելացել են 2 հոգի. յուլիսի 25-ին առաւօտեան կային 25 հոգի հիւանդներ։

Դրագունեան գնդի աւագ-բժշկի տուած տեղեկութեան համեմատ, յուլիսի 14-ից Յարսկիե-կօլօդցի աւանում դետեղված ռուս զաղթականների մէջ նոր հիւանդացողներ չը կային։ Յուլիսի 20-ին հիւանդացել է մի սանիտար տեղական գիւղացիներից, որին պատկեցրել են զինուորական հիւանդանոցի խօլէրային բաժնում։ Նոյն թէին արիւնով փորլուծութեամբ հիւանդանալու 2 դէպքեր են եղել մի օֆիցէրի ընտանիքում, 10 և 12 երեխաների մօտ։ Յուլիսի ամսի 2-ը կէսից աւանի աղքատաբնակութեան մէջ, մանաւանդ երեխաների մէջ, նկատվում էին աղիքի հիւանդութեան դէպքեր։

Գօրու գաւառապետը հաղորդում է, որ Գօրիում կրկին հիւանդացել են 5 հոգի, մեռել են 3 հոգի։ Մեղվրսկիսի գիւղում յուլիսի 17-ից հիւանդացել է 1, մեռել է 1 հոգի։ Ամբէվի գիւղում հիւանդացել են 15, մեռել են 9 հոգի։ Դվանի գիւղում հիւանդացել են 3, մեռել է 1 հոգի։ Խէյթի գիւղում հիւանդացել են 5, մեռել է 1 հոգի։ Կէլքցէուլի գիւղում հիւանդացել են 10, մեռել են 6 հոգի։ Տիրգնխի գիւղում հիւանդացել են 4, մեռել է 1 հոգի։ Ամէնի գիւղում հիւանդացել է 1 հոգի։ Մացլէսի գիւղում մեռել է 1 հոգի։ Կրխսխսէվի գիւղում հիւանդացել է 1 հոգի։ Խաշուրի գիւղում հիւանդացել է 1 հոգի։ Խոլէբի գիւղում մեռել են 3 հոգի։ Ցխինվալ գիւղում հասարակութեան հաշուով կառուցված է բարակ 10 մահճակալներով և հրաւիրված է բժիշկ։

Ախալքալաքի քաղաքում յուլիսի 24-ին հիւանդացել են 2 եկեղեցիներ։

Բօրչալուի գաւառապետը հաղորդում է յուլիսի 24ից, որ իր օգնականը՝ իշխան Աբխազի հիւանդացել է խօլէրայով։

Դուշէթի գաւառապետը հաղորդում է, որ կասվրիսի գիւղում խօլէրայով հիւանդանալու առաջին դէպքը եղել է յուլիսի 18-ին. հիւանդացել է մի այրի կին, որը վարակվել է մի ճանապարհորդ հիւանդից, որին ջուր է խմեցրել։ Յուլիսի 19-ին և 20-ին հիւանդացել են 17 հոգի, նրանցից մեռել են 13 հոգի։ Յուլիսի 22-ին կրկին հիւանդացել են 4 հոգի։

—

Ելիսաւետպոլի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 21-ին և 22-ին Շուշի քաղաքում հիւանդացել են 3, առողջացել են 8, մնացել են 18 հոգի. գաւառում հիւանդացել են 41, առողջացել են 11, մեռել են 19, մնացել են 35 հոգի։ Ելիսաւետպոլում հիւանդացել են 11, առողջացել են 5, մեռել են 5, մնացել են 24 հոգի. գաւառում հիւանդացել են 27, առողջացել են 24, մեռել են 12, մնացել են 112. Նուխի քաղաքում հիւանդացել են 12, առողջացել են 4, մեռել են 10, մնացել են 11 հոգի. գաւառում հիւանդացել են 10, առողջացել են 4, մեռել են 6, մնացել են 40 հոգի։ Զէբրայիլի գաւառում հիւանդացել են 23, առողջացել են 8, մեռել են 24, մնացել են 48 հոգի։ Ղազախի գաւառում հիւանդացել է 1, առողջացել են 4, մեռել է 1, մնացել է 1 հոգի։ Արէշի գաւառում հիւանդացել են 31, առողջացել են 21՝ մեռել են 20, մնացել են 32 հոգի։ Զանգեզուրի գաւառում հիւանդացել են 162, առողջացել են 103, մեռել են 69, մնացել են 100 հոգի. Ջէվանշիրեան գաւառում հիւանդացել են 10, առողջացել է 1, մեռել են 5, մնացել են 24 հոգի։

—

Ղարսի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 23-ին Բաշ-Շօրագեալում կային 25 հիւանդներ, մեռել են 7, առողջացել է 1, կրկին հիւանդացել են 15, մնացել են 22 հոգի. Թենիսում կային 3, կրկին հիւանդացել են 5, մնացել են 8 հոգի։

—

Բաքուի նահանգապետը հաղորդում է, որ խօլէրային հիւանդանոցը մտել են 6, մեռել են 3, առողջացել են 4, մնացել են 50 հոգի։ Հիւանդանոցից դուրս մեռել են 6. նահանգում հիւանդացել են 98, մեռել են 86, առողջացել են 7, մնացել են 133 հոգի. զինուորական հիւանդանոցում կային 29 հոգի. Բաքուի բանտում հիւանդացել է 1, մեռել են 2, մնացել են 8 հոգի։

—

Քութայիսի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 22-ին Փոթիում հիւանդացել է 1 հոգի. Անակլիում հիւանդացել են 2, Քութայիսում մեռել է 1 հոգի։ Հիւանդանոցում կային 5 հիւանդներ, հիւանդանոցից դուրս 1 հոգի. Փոթիի հիւանդանոցում 11, հիւանդանոցից դուրս 1, Անակլիում կային 2 հոգի։

—

Դաղստանի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 22-ին Շուրայում հիւանդացել են 7, մեռել են 2 հոգի. Պետրովսկում հիւանդացել են 8, մեռել են 9, առողջացել են 9 հոգի. Դէրբէնտում հիւանդացել են 5, մեռել են 2, առողջացել են 2 հոգի. շրջաններում հիւանդացել են 493, մեռել են 225, առողջացել են 209, մնացել են հիւանդներ՝ Շուրայում 14, որոնցից 6-ը զինուորական բարակում, Պետրովսկում 50, Դէրբէնտում 35, որոնց թիւում և տեղական բանտի 29 զինուորներ. շրջաններում՝ Կիւրինեան 205, Կայտագ-Տարասարանեան 128, Սամուրեան 192, Դարգինեան 108, Կազիկումուխեան 150, Շուրայեան 281, Ավարեան 40, Անդրեան շրջանում Դաղստանի հեծելազօր գնդի 7 զինուորներ։

—

Երևանի նահանգապետը հաղորդում է յուլիսի 20-ից, որ Նախիջևանում կային հիւանդներ 21, հիւանդացել են 7, մեռել են 5, առողջացել են 2, մնացել են 21 հոգի. Նախիջևանի գաւառում կային 48, հիւանդացել են 50, մեռել են 23, առողջացել են 36, մնացել են 39 հոգի. Շարուրի գաւառում կային 16, հիւանդացել են 12, մեռել են 6, առողջացել են 4, մնացել են 18 հոգի. Ալէքսանդրօպոլում կար 1 հիւանդ, գաւառում կային 6, հիւանդացել 18, մնացել են 24 հոգի. Երևանում մեռել են 2 հոգի։ Յուլիսի 21-ին Նախիջևանում հիւանդացել են 8, մեռել են 7, առողջացել են 2, մնացել են 20 հոգի. գաւառում հիւանդացել են 50, մեռել են 9, առողջացել են 7, մնացել են 73, Շարուրի գաւառում հիւանդացել են 31, մեռել են 25, մնացել են 24 հոգի. Ալէքսանդրօպոլում հիւանդացել են 2,

մնացել են 3. Երևան քաղաքում հիւանդացել են 3, մեռել են 2, մնացել է 1. գաւառում հիւանդացել են 33 հոգի։ Զաքաթալի շրջանի գլխաւորը հաղորդում է, որ Զաքաթալի շրջանի Կախ գաւառամասի գիւղերում մինչև յուլիսի 22-ը հիւանդացել են 45, մեռել են 22, առողջացել են 2, հիւանդներ մնացել են 21 հոգի։

—

Բաքուի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 23-ին Բաքուի խօլէրային հիւանդանոցը մտել են 3, մեռել են 3, առողջացել են 6, մնացել են 44, հիւանդանոցից դուրս մեռել են 6 հոգի. նահանգում հիւանդացել են 207, մեռել են 196, առողջացել են 47, մնացել են 126 հոգի. զինուորական հիւանդանոցում կային 30. Բաքուի քանտում հիւանդացել են 3, մնացել են 11 հոգի։

—

Ելիսաւետպոլի նահանգապետը հաղորդում է որ յուլիսի 23-ին Շուշի քաղաքում հիւանդացել է 1, առողջացել է 1, մեռել է 1, մնացել են 8. գաւառում հիւանդացել են 9, առողջացել են 4, մեռել են 11, մնացել են 16. Ելիսաւետպոլ քաղաքում հիւանդացել են 2, առողջացել է 1, մեռել են 2, մնացել են 13. գաւառում հիւանդացել են 31, առողջացել են 12, մեռել են 29, մնացել են 53. Նուխի քաղաքում հիւանդացել են 12, առողջացել են 3, մեռել են 7, մնացել են 13. գաւառում հիւանդացել են 5, առողջացել են 3, մեռել են 4, մնացել են 22. Ղազախի գաւառում հիւանդացել է 1, մնացել են 2. Արէշի գաւառում հիւանդացել են 18, մեռել են 8, մնացել են 24. Ջէվանշիրի գաւառում հիւանդացել են 69, առողջացել են 22, մեռել են 23, մնացել են 48. ընդամենը նահանգում մնացել են 282 հոգի։

—

Ղարսի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 24-ին Բաշ-Շօրագելում կային 32, մեռել են 6, առողջացել են 8, աւելացել են 20, մնացել են 38. Ցեխնիսում մեռել են 3, առողջացել են 2, աւելացել են 8, մնացել են 11 հոգի. Ղզլչախչա գիւղում հիւանդացել են 2 հոգի։

—

Երևանի նահանգական վարչութիւնը հաղորդում է, որ յուլիսի 22-ին Նախիջևանում հիւանդացել են 3, մեռել են 8, առողջացել է 1, մնացել են 14. գաւառում մեռել են 4, մնացել են 73. Շարուրի գաւառում հիւանդացել են 10, մեռել են 4, առողջացել են 2, մնացել են 28. Ալէքսանդրոպոլում մեռել է 1, առողջացել է 1, մնացել է 1. գաւառում հիւանդացել են 13, մեռել են 4, մնացել են 32. Երևանում հիւանդացել է 1, մնացել են 2. Սուրմալուի գաւառում մեռել են 5, հիւանդացել են 12 հոգի։

—

Սաւրոպոլի նահանգական վարչութիւնը հաղորդում է, որ յուլիսի 24-ին Նովոգրիգորիեվսկ գաւառում հիւանդացել են 448, առողջացել են 45, մեռել են 179. Մէդվէժինսկ գաւառում հիւանդացել են 15, առողջացել են 4, մեռել են 13. Ալէքսանդրովսկ գաւառում հիւանդացել են 7, մեռել է 1 հոգի։

—

Դաղստանի զինուորական նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 23-ին Շուրայում հիւանդացել են 3, մեռել են 4, առողջացել է 1. Պետրովսկում հիւանդացել են 12, մեռել են 7, առողջացել են 3. Դէրբէնտում հիւանդացել են 10, մեռել են 2, առողջացել են 4. շրջաններում հիւանդացել են 730, մեռել են 364, առողջացել են 358. մնացել են հիւանդներ՝ Շուրայում 12, որոնցից 7 զինուորներ, Պետրովսկում 52, Դէրբէնտում 39, որոնց թւում 30 զինուորներ. շրջաններում՝ Կիւրինեան 227, Տաբասարանեան 119, Սամուրեան 176, Դարգինեան 131, Կազիկումուխեան 150, Ավարեան 60, Անդեան 63 հոգի։

—

Քութայիսի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 23-ին հիւանդացել են՝ Փոթիում 1, Քութայիսի գաւառի Սամտրէդիում 1 հոգի. մեռել են՝ Քութայիսում 2, Անակլիում 1, Սամտրէդիում 1 հոգի. մնացել են հիւանդներ՝ Քութայիսի հիւանդանոցում 3, Փոթիի հիւանդանոցում 12, հիւանդանոցից դուրս 1, Անակլիում մեռել է 1 հոգի։

—

Բաքուի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 24-ին Բաքուի խօլէրային հիւանդանոցը մտել է 1, մեռել է 1, առողջացել են 6, մնացել են 38, հիւանդանոցից դուրս մեռել են 2, նահանգում հիւանդացել են 126, մեռել են 66, առողջացել են 44, մնացել են 118 հոգի։ Բաքուի զինուորական հիւանդանոցում կային 29, Բաքուի քանտում հիւանդացել է 1, մեռել է 1, մնացել է հոգի։

—

Ելիսաւետպոլի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 24-ին Շուշի քաղաքում հիւանդացել են 4, Առողջացել է 1, մեռել են 2, մնացել են 9. գաւառում հիւանդացել են 22, առողջացել են 6, մեռել են 16, մնացել են 16 հոգի։ Ելիսաւետպոլ քաղաքում հիւանդացել են 3, առողջացել են 5, մեռել են 2, մնացել են 9. գաւառում հիւանդացել են 48, առողջացել են 31, մեռել են 30, մնացել են 40. Նուխի քաղաքում հիւանդացել են 17, որոնց թւում և 1 կալանաւոր. առողջացել են 6, մեռել են 8, որոնց թւում և 1 կալանաւոր, մնացել են 16. գաւառում հիւանդացել են 23, առողջացել են 7, մեռել են 20, մնացել են 30. Ջէբրայիլի գաւառում հիւանդացել են 4, առողջացել են 7, մեռել են 5, մնացել են 14. Ղազախի գաւառում առողջացել է 1, մնացել է 1. Արէշի գաւառում հիւանդացել են 47, մեռել են 26, մնացել են 45. Ջէվանշիրի գաւառում հիւանդացել են 19, առողջացել են 22, մեռել են 5, մնացել են 40. ընդամենը նահանգում մնացել են 269 հիւանդներ։

—

Դաղստանի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 24-ին Պետրովսկում հիւանդացել են 7, մեռել են 5, առողջացել են 5. Դէրբէնտում հիւանդացել են 2, մեռել են 4, առողջացել են 3. շրջաններում հիւանդացել են՝ 776, մեռել են 326, առողջացել են 277, մնացել են հիւանդներ՝ Շուրայում 12, որոնցից 7 հոգի զինուորներ են, Պետրովսկում 49, Դէրբէնտում 34, որոնց թւում տեղական զօրաբաժնի 30 զինուորներ։ Շրջաններում՝ Կիւրինեան 239, Կայտագ-Ցաբասարանեան 147, Սամուրեան 183, Դարգինեան 162, Կազիկումուխեան 223, Շուրայի 227, Ավարեան 77, Անդեան 74, Դաղստանի հեծելազօր գնդի զինուորներ 7 հոգի։

—

Երևանի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 23-ին Նախիջևանում կային 14 հիւանդներ, հիւանդացել են 2, առողջացել են 3, մեռել են 3, մնացել են 10. Շարուրի գաւառում հիւանդացել են 15, մեռել են 13, առողջացել են 8, մնացել են 22. Ալէքսանդրոպոլում կար 1 հիւանդ, մեռել է 1, նոր հիւանդացողներ չը կային։ Ալէքսանդրոպոլի գաւառում մեռել են 15, մնացել են 18. Երևանում կային 2 հիւանդներ, Սուրմալուի գաւառում կային 12 հիւանդներ։

—

Քութայիսի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 24-ին հիւանդացել են Քութայիսում 2, մեռել են 2. Լէչխումեան գաւառում 1, մնացել են հիւանդներ Քութայիսում 1, Փոթիում 12, հիւանդանոցից դուրս 1, Անակլիում 1 հոգի։

—

Ղարսի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 25-ին Բաշ-Շօրագելում մեռել են 7, առողջացել են 8, աւելացել են 15, մնացել են 38. Ցիխնիսում մեռել են 6, առողջացել են 3, աւելացել են 23, որոնց թւում և 1 գիւղէր, մնացել են 24. Ղզլչախչախում մեռել է 1, մնացել է 1 հոգի։

—

Սաւրոպոլի նահանգապետը հաղորդում է, որ Ալէքսանդրովսկ գաւառում հիւանդացել են 61, մեռել են 17, Նովոգրիգորիեվսկում հիւանդացել են 226, մեռել են 106, առողջացել են 66. Մէդվէժինսկ գաւառում հիւանդացել են 34, մեռել են 23, առողջացել է 1 հոգի։

—

Զաքաթալի շրջանի գլխաւորը հաղորդում է, որ Կախ գաւառի գիւղերում յուլիսի 22-ից մինչև 24-ը հիւանդացել են 8, մեռել են 7, առողջացել է 1, մնացել են 21 հոգի։ Յուլիսի 24-ին Զաքաթալ բերված խօլէրայով հիւանդ վրացին մեռել է։

—

Կիրակի, յուլիսի 26-ին, Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցում խօլէրայով հիւանդներ նախընթաց օրը կային 9 տղամարդիկ և 3 կանայք. գիշերվայ ընթացքում աւելացաւ 1 տղամարդ՝ Կավթիխէվի գիւղից՝ Ստեփան Առաքելով։ Յուլիսի 27-ին Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցում կային 10 տղամարդիկ և 3 կանայք։ Յուլիսի 27-ին աւելացաւ 1 տղամարդ՝ Գլուշչէնկո, 10-դ քաղաքամասից, որը և մեռաւ. դուրս գնաց հիւանդանոցից 1 կին՝ Գոլովկովա, մեռան՝ Պուլատովի-շվիլի, Առաքելով, Օլշէվսկի, և 1 կին՝ Գրիքուրով։ Երկաթուղային հիւանդանոցն է մտել կայարանի բուֆէտում ծառայող Եղոր Զակէլի, ձուլիչ Սորէնիկով և մի ախաղին՝ Անիսիա Բուտց աղքատուհով։ Զինուորական հիւանդանոցն են տարված՝ վլադիկավկասեան գնդի ֆէլդֆէբել Իվանովսկիյ, Շաւի-Սոփէլի արուարձանից Գէորգ Օհանէզով. յուլիսի 25-ին մեռաւ ունտեր-օֆիցերի կին Իրինա Գուդէեվա և դուրս գնաց հիւանդանոցից բանտոր Իվան Սուրկով։ Յուլիսի 25-ին Միքայէլեան հիւանդանոցն անձամբ եկան Եֆրոսինիա Գօձիչէվսկայա և Վէրա Ցուգուշ կասկածելի հիւանդները։ Յուլիսի 26-ին հիւանդացաւ և տանն է բժշկվում, 10-դ քաղաքամասում, Համբարձում Առաքելով և 3-դ քաղաքամասում Իրինա Շէյերբինա. մեռաւ 5-դ քաղաքամասում Ցիպրա Կարելի-շվիլի անունով կինը։ Մեսեխի բանտի հիւանդանոցից դուրս գնացին 3 հոգի։

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Յուլիսի 14-ին

Եթէ մի հայեացք գցենք խօլէրայի գործունէութեան վրա յունիսի 13-ից սկսած, երբ այստեղ առաջին անգամ հիւանդանալու դէպքեր եղան, մինչև այսօր,—կը տեսնենք, որ սկզբում հիւանդացող քիչ կար, յետոյ սաստկացաւ, իսկ այժմ հանդարտ է։ Այս այսպէս լինելու պատճառն այն է, որ խօլէրայի սաստկացած ժամանակը Բաքուից այստեղ փախչողների թիւը անհամար էր. իսկ այժմ, երբ Բաքուից փախչելը դադարել է, հիւանդութիւնն էլ մեղմացել է։ Խօլէրան համաճարակման կերպարանք չէ ստանում, գոնէ առ այժմ։ Հայերի մէջ այժմ հիւանդանալու մի կամ երկու դէպք է լինում օրական. Թուրքերի մասին դժուար է մի բան ասել....

Անցեալ անգամ ասեցի, որ մեր ժողովուրդը ոչինչ միջոցների չէ ձեռնարկում խօլէրայի դէմ կռուելու համար։ Նա միայն մատաղներ անել գիտէ։ Նա իր բերնից կտրում է, միայն հացով բաւականանում է, հակառողջական պայմանների մէջ ապրում է, բայց ոչխարներ է գնում, դանդան ծախսեր է անում և գնում դանդան ուխտատեղիներ աղօթելու, որ Աստուած ազատէ իրանց խօլէրայից, պատժից.... Վերջին օրերս այստեղ հազարաւոր ոչխարներ են ծախվել մատաղացուի համար.... Խօլէրայի յայտնվելու օրից սկսած՝ ամեն օր մատաղի համար փող հաւաքող կանանց ամբողջ լէգիոններ կը տեսնէք շրջելիս փողոցներում.... Ամսիս 11-ին Շուշու սանիտարական մասնաժողովները գրեցին թեմիս սրբազան առաջնորդին, որ քահանաների միջոցով եկեղեցիներում քարոզեն, որ ժողովուրդը առ այժմ չը գնայ ուխտատեղիներ։ Բայց այդ շատ ուշ էր, որովհետև շատերը արդէն գնացել էին դանդան ուխտատեղիներ, այնպէս որ, թէև եկեղեցիներում մատնաժողովների գրածը յայտնվեց ժողովրդին շաբաթ երեկոյեան, բայց ոչինչ հետևանք չունեցաւ։—Հոգեոր կառավարութիւնը պէտք էր, առանց ուրիշների, կատարէր իր պարտականութիւնը։ Շատ կարևոր էր, որ նա վաղօրօք հասկացներ ժողովրդին, որ առ այժմ թողնէր ուխտագնացութիւնը։

Ինչ վերաբերում է թուրքերին, նրանք էլ ահա թէ ինչպէս են կռւում խօլէրայի դէմ։ Ինչպէս ինձ անցեալ օրերը պատմեց մի թուրք վաճառական, նրանք կանայք են վարձել, որ դրանք մէջիդների դռներին ամեն օր ողբան, աղաչեն Աստուծուն՝ ազատել իրանց իր պատժից։ Այս էլ թուրքերի գործ դրած սանիտարական միջոցը.... Թուրքերը դժգոհ են, որ իրանց վարակված տները դեզինֆեկցիայի են ենթարկում։

Տ.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

—

Յուլիսի 1-ին

Ցաւալի է, որ Երևանեան նահանգում մի քանի տեղ երաշտութիւն է տիրում։ Այդ վիճակին արժանացած են նաև Նոր-Բայազէտի, Դարաչիչաղ և այլ գաւառները, ուր հացահատիկների գները օրից օր բարձրանում են։ Այդ դէպքում անշուշտ հացատէր շահամոլ վաճառականները, որոնք քիչ թէ շատ քանակութեամբ հացահատիկներ ունեն ամբարած, իրանց երջանիկ են զգում, որովհետև կատարվեց իրանց բաղձանքը և իրանք արդէն հասան իրանց բուն նպատակին, քանի որ նրանք աշխատում էին կրկնապատիկ և էլ աւելի գնով ծախել իրանց ունեցած հացահատիկները։ Այդպիսի վաճառականներին հաճելի է անշուշտ, որ խալվարը 15 ռուբլի արժեցող ցորենը ծախեն 30 ռուբլիով։ Բայց այդ հանգամանքը շատերին հաճելի չէ այն պատճառով, որ հազարաւոր կամ նոյն իսկ տասնեակ հազարաւոր ընտանիքներ պիտի աղքատանան և մատնվեն յետին չքաւորութեան, իսկ մի քանի տասնեակ շատ հաց ունեցող կամ հացավաճառ ընտանիքներ մի քանի հարիւրներով աւելի պիտի շահվեն, աւելի հարստանան....

Ութ օր սրանից առաջ Նոր-Բայազէտի գաւառում ցորենի խալվարը (30 պուդ) ծախվում էր 16—17 ռուբլիով, իսկ այժմ 22—23 ռուբլիով դժուարութեամբ են համաձայնվում ծախել, որովհետև զգալի է երաշտութեան արդիւնքը, նրա սոսկալի հետևանքները....

Նոր-Բայազէտից սկսած մինչև Հին-Նախիջևան արքունական նոր ճանապարհ է բացվում։ Այդ ճանապարհը աւելի կարճ լինելով Ելենովկա կայարանից Երևանի վրայով դէպի Հին-Նախիջևան անցած ճանապարհից՝ շատ ձեռնտու կարող է լինել ճանապարհորդներին, մանաւանդ սայլապանութեամբ և չարվադարութեամբ (դաթրչի) պարապող դասակարգերին, որոնք ընդ միշտ Պարսկաստանի ապրանքը և բերքերը քրեհով տեղափոխում են Զուլֆայից դէպի Թիֆլիս և այլ տեղեր։ Ճանապարհը, որ ձգվում է անհուն ձորերի և անհաւելի քարաժայռերի ծերպերով, գարնան սկզբից սկսած մինչև այժմ չինվում, հարթվում է և անգին մեծութեամբ ապառաժ քարերը ջարդվում, փշրվում են վառօդի օգնութեամբ։ Այդ նոր ճանապարհը բացելու համար անգին գումար է դուրս թողնված արքունի գանձարանից և նոր ուղին, ինչպէս տեսնում ենք, պատրաստ կը լինի եկող տարի։

Տեղացիք շատ ուրախ են, որ այսուհետև հաղորդակցութիւն և գործ կունենան Հին-Նախիջևանի հետ սայլի ճանապարհով և յոյս ունեն, որ իրանց յետընկած, խուլ քաղաքում գուցէ մի ժամանակ առևտուրը ծաղկի և բարեյաջող կերպարանք ստանայ։

Ս.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Բօրժոմ, 20 յուլիսի

Ներսիսեան ազգային դպրանոցի տեսչի արձակման առիթով հարկ համարեցի մի փոքրիկ նամակով «Մշակի» № 70-ի մէջ բացատրել իմ ընտրողներին կամ ազգին իմ տուած քուէի պատճառները։ Այսպէս կարծում եմ՝ ամեն մի պաշտօնաւոր պարտաւոր է կարևոր դէպքում հաշիւ տալ հասարակութեանը։

Այդ բացատրութիւնը հաճելի չէ եղել մեր աստուածաբան կնեազ հոգաբարձու Կ. Բէհբուդովին և նա հարցից չեղվելով, մի երկար յօդուածով իրան արժանի օրգանում, «Արձագանքում» տպված, կնեազներին վայել ածականներ է տալիս, անտեղի կերպով իմ մասնաւոր կեանքն է շօշափում և այլն։ Սեղանչած կը լինէի իմ պատուի դէմ, եթէ ես պատասխանէի մի մարդու, որը փնտռում է իր նմանները, հետը հանաքներ և սրախօսութիւններ անելու, չը խնայելով ոչ լրագրին, որ արդէն ծաղրալի դրութեան է հասցրել, և ոչ հասարակութեան՝ այս աղետի ժամանակ. մի մարդ որ հասարակ քաղաքավարութիւնն անգամ չը հասկանալով՝ իր ընկերին, որի հետ միասին տարիներով նստած դպրանոցի գործերն է ղեկավարում, այդպէս անպատկառ է վերաբերվում և ոռ է այդ մարդը. դա հասարակութիւնից բարձր կանգնած անձնաւորութիւն է (sic), քսան տարի առաջ խմբագիր էր ռուսաց թերթի, հասարակութեան բարոյականութեան և քաղաքավարութեան կրթիչը։

Որովհետև «Արձագանքն» իր 82 համարի մէջ նորից տեսչի հարցը պարզաբանելով՝ հոգաբարձութեան իրաւունքների սահմաններն է որոշում ու հաստատում, և այդ յօդուածի մէջ դարձեալ ինձ վիրաւորում, լի սալոսութիւններով, իբրև թէ ես նախ իմ ստորագրութեամբ վաւերացրել եմ տեսչի արձակման արձանագրութիւնը և ապա սկսել եմ պաշտպանել իմ կլիէնտին, ուստի ես այսօր ստիպված եմ պատասխանել, որ ես տեսչի արձակման արձանագրութիւնը ստորագրած չեմ, այլ ես բողոքել եմ արձանագրութեան վրա մակա-

գրելով, որ ճիշդ չէ կազմված նա և մասնաւոր նամակով խնդրել եմ հերթական հոգաբարձուին՝ մտցնել արձանագրութեան մէջ այդ հարցի առիթով եղած վիճաբանութիւնները։ Դա պատմական կարևորութիւն ունի։ Այժմ բարի եղէք լսել, թէ ինչպէս քննվեց տեսչի հարցը երկրորդ հոգաբարձական նիստում (առաջին նիստում 4 հոգով էին արձակել)։

Հոգաբարձու պ. Ղազարեանը պահանջեց շատ խստիւ, ասելով, թէ հասարակութիւնը վրդովված է, պահանջում է պատճառները. յայտնեցէք տեսչի թերութիւնները, որ նրա համեմատ ձայն տամ։ Հոգաբարձուներից երեք հոգի յայտնեցին, որ այս ինչ ժամանակ այս թերութիւնները, այս չարիքը, այս դեղծումը գործեց տեսուչը. երեսում էր, որ երկար ժամանակից տեսչին լուռ ու մունջ դիտում էին և դրանց մէջ նաև այն հոգաբարձուն, որը շատերին ասել է տեսչի համար, թէ դա մի գիւտ է, փրկիչ է Ներսիսեան դպրոցի համար, այսօր հակառակն է վկայում, որովհետև նրա ընթացքն այսօր իրանց նպատակին նպաստաւոր չէ։ Ես որ ուշադրութեամբ և ապշած լսում էի այդ հոգաբարձուին, նկատեցի, որ եթէ արդարև տեսուչը տարիների ընթացքում այդքան չարիք է հասցրել դպրոցին և անպարտաճանաչ է գտնվել դէպի իր պաշտօնը և վսեմ կոչումը, ապա որքան չարիք են հասցրել դպրոցին և անպարտաճանաչ են գտնվել այն հոգաբարձուները, որոնք տարիների ընթացքում դիտելիս են եղել այդ և չեն յարուցել մի լուրջ խնդիր հոգաբարձական ատեանում, որ մի վճիռ կայացնէր և ազատվէր դպրոցը այդ չարիքից. այս նկատողութեանը պ. Եւանդուլեան պատասխանեց. «շատ ճշմարիտ էք ասում»։

Այնուհետև հերթական հոգաբարձու պ. Յ. Տէր-Յովհաննիսեան ձայներ ժողովեց, իսկ նախագահող հայր սուրբը լուռ նստած էր։ Ես որ ուշացել էի փոքր ինչ, հարցրեցի մի հոգաբարձուից, ինչու հայր սուրբը չէ ղեկավարում նիստը, ինձ պատասխանեց, թէ սրբազանից հրահանգ ունի, տեսչի և ուսուցիչների հարցի մէջ չը մասնակցել։ Այժմ թող ընթերցողը դատէ՝ եղել է նախագահ տեսչի հարցը քննելիս, թէ ոչ։ Հարցը վերջացնելուց յետոյ կարդացին սրբազան սինոդի հեռագիրը, որը հրամայում է թողնել տեսչին իր պաշտօնի մէջ առժամանակ։ Ես պահանջեցի, առանց քննութեան ենթարկելու՝ կատարել ս. սինոդի հրամանը, բայց ուշադրութեան չառնվեց. հարկ համարեցին պատասխանել ս. սինոդին։

Զարմանալի բան է, որ այսօր «Արձագանքը» իր աշխատակցի հետ յարձակվում է խնամութեան և խնամիների վրա, և իրան պաշտպան է ցոյց տալիս դպրոցի շահերին։

Մեր «Արձագանքը» իր շապիկը «տարին տասն և երկու ամիս» փոխում է. նա մի որոշ սկզբունք չէ պաշտպանում և մէկից շուտով անցնում է միւսը։ «Արձագանքը» համարձակվում է դեռ անշահասիրութեան պաշտպան հանդիսանալ, քանի որ խնամութիւնը գործադրում է նա նորագոյն կատարելագործված սիստէմով։ Վերոյիշեալ թերթի խմբագիրը հոգաբարձութեան պաշտօնում կատարեալ միսիօների դեր է խաղացել։ Նոյն խմբագիրը հոգաբարձութեան նիստերում այն ուսուցիչների պաշտպանողն է եղել, որոնք կարող էին նրա շահերին ծառայել։ Այս խնամութիւն չէ, ապա ինչ է։ Էլ ինչու է նա իր Մէֆիստոֆէլի դէմքը ծածկում քողով։

Վերջացնելով նամակս, ապահովացնում եմ «Արձագանքի» խմբագրութեան և նրա արբանեակներին, որ խնամութիւնը միշտ կը մնայ իրանց և իրանց հետևողների ժառանգութիւնը և այդ է այն մեծ չարիքը, որի տակ ճնչվում է խեղճ դպրոցը։ Հրաչքի նման մի բան պէտք է համարել, եթէ մի ուսուցիչ առանց դրանց երկրպագելու, առանց երդվելու և յայտնելու դրանց իր ուղղութիւնը, հնարաւորութիւն ունենայ ընդունվել դպրոցում։ Նոյնպէս և փորձված ու տարիներով լրատես եղած աշակերտը, որին խօսք են տուել արտասահման ուղարկել՝ եղուիտական ոգով կրթվել և վերադառնալ իրանց շահերին ծառայելու համար։

Ցօղուածի միւս սրախօսութիւնները՝ «վաճառականի սկզբունք» և այլն աւելի քան անամօթ մի նկատողութիւն է։ Զարմանալին այն է, որ «բարոյականութեան և սկզբունքի» պաշտպան են հանդիսանում այն մարդիկ, որոնց համար այդ վսեմ գաղափարների նշանակութիւնը միշտ 0 է եղել և է այժմ։

Ա. Մէլիք-Աղարեանց

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Օգոստոսի մէկից «Մշակ» լրագրին բաժանորդ գրվել ցանկացողները՝ պէտք է վճարեն 5 ամսով (մինչև յունվար 1893 թ.) հինգ բուբլի։

—

«Кавказъ» լրագրին հաղորդում են, որ բացի բժիշկ Իլիինից, ներքին գործերի մինիստրութեան բժշկական բաժինը ուղարկում է Պարսկաստան դարձեալ երկու ուրիշ բժիշկներին, այն է Տէր-Ստեփանեանցին և Աստամանցին։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ պ. Յ. Սաղաթելեան ուղարկել է մեզ հետևեալ նամակը տպագրելու համար. «Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանի վարչութիւնը յայտարարում է, որ ճեմարանում ազատ են այժմ հայոց մատենագրութեան, ընդհանուր և հայոց պատմութեան և ֆրանսերէն լեզուի ուսուցիչների պաշտօնները։ Այդ պաշտօնները վարել ցանկացող և ձեռնհաս անձինք թող բարեհաճեն դիմել ճեմարանի վարչութեան։»

—

Թուրք հրապարակախօս Ի. Գասպրինսկիյ, «Переводчикъ» լրագրի խմբագիրը, այս օրերս հրատարակել է թուրքերէն լեզուով մի բրօշիւր «Խօլէրա և նրա դէմ կռուելու միջոցներ» վերնագրով։ Բրօշիւրի նպատակն է տարածել ճիշդ տեղեկութիւններ խօլէրայի մասին թուրք ամբոխի մէջ, և այդ պատճառով նա կազմված է մատչելի կերպով։ Ցանկալի է որ այդ բրօշիւրը տարածվի մահմեդականների մէջ. գինը մատչելի է, այն է 5 կոպէկ։

—

Մենք առիթ ունեցանք նորերս լսելու մի երիտասարդի երգեցողութիւնը, և չենք կարող ուշադրութիւն չը դարձնել այդ ձայնի վրա։ Երիտասարդը, պ. Մինաս Զամբաքեան, եկել է Անդրկասպեան երկրից, որպէս զի արտասահման գնայ իր ձայնը կատարելագործելու։ Թիֆլիսի երաժշտական շրջանին պատկանող մի քանի հեղինակաւոր անձինք լսելով երիտասարդի զօրեղ ձայնը, որ տենօր է, և միանգամայն հաւանելով նրան, խորհուրդ են տուել երգչին մի առ ժամանակ մնալ Թիֆլիսում, այստեղ պարապել և ապա ուղևորվել արտասահման։ Ամենքն էլ այն կարծիքի են, որ այդ ձայնը լաւ ապագայ կունենայ։ Զենք կարող ուրախութեամբ չը յիշատակել և այն, որ Մերվի մի հայ վաճառական, պ. Գէորգ Աւետիսեան, յանձն է առել պ. Զամբաքեանի ծախսի կէսը հոգալ, մի վարմունք, որն արժանի է շնորհակալութեան։ Ցոյս ունենք, որ կը գտնվեն ծախսի միւս մասը հոգացողներ ևս, որով միջոց տուած կը լինեն երիտասարդին մշակելու իր ձայնը։

—

Զարմանալի անդգայ մարդիկ են երևում այն «երջանիկները», որոնք մեր գեղեցիկ ամարանոցներում՝ Բօրժոմում, Կօջօրում, Աբաստումանում, Մանգլիսում, Դիլիջանում նստած՝ վայելում են գեղեցիկ օդ և հանգիստ կեանք, հեռու Թիֆլիսի անտանելի շոգից, թողից և երկիւղից... Ամարանոցային քնքոյշ և երջանիկ հասարակութեան մտքովն անգամ չէ անցնում, գոնէ փողով, նուիրատուութիւններով օգնելու այն հաղարաւոր աղքատներին, որոնք Թիֆլիսում ընկած մնացել են, և իրանց միակ յոյսը դրել ձրի ճաշարանների, թէյատների և հասարակական նուիրատուութիւնների վրա։ Միայն Կօջորը մի քանի գրօշ ուղարկեց յօգուտ թէյատների, իսկ միւս ամառանոցները մինչև այժմ մատը մատին անգամ չեն խփել։

—

Ցօղուտ Բաֆայէլ Պատկանեանի ստացանք Ախալքալաքից, պ. Զարմայր Արվանեանի միջոցով հանգանակած 21 բուբլի։ Նախկին 1725 բ. 73 կ. հետ այժմ ունենք 1746 բուբլի 73 կոպէկ։

—

ԳԱՆԶԱԿԻՑ մեզ գրում են. «Ինչպէս այս ամառը Ռուսաստանում տիրապետող սովի ժամանակ հասարակական բարեգործութիւնը օգնութիւն հասցրեց կարօտեալ ժողովրդին, թող նոյնը լինէր և այժմ, խօլէրայի ժամանակ, մեր երկրում։ Թող մասնաւոր բարեգործութիւնը աշխատէր անողորմ մահի ձեռքից խլել հարիւրաւոր անմեղ զոհերին։ Հարկաւոր են բժիշկներ, հարկաւոր են դեղեր. իրաքանչիւր 5 կամ 10 գիւղ եթէ ունենայ մի բժիշկ, մի փոքրիկ դեղատուն, այդ էլ բաւական կը լինէր։ Ժողովուրդը խեղճ է և կարօտ է հասարակութեան օգնութեան ու մխիթարութեան։ Գանձակ գաւառում բժիշկներ և դեղատներ անհրաժեշտ են Գետաշէն, Բանանց, Փիք և Բարսում կենտրօնական գիւղերում, որոնցից իւրաքանչիւրը իր շուրջն ունի մի քանի հայաբնակ ու թուրքաբնակ գիւղեր և ժամանակաւոր ամառնային բնակավայրեր։ Դեղերով ու այլ պարագաներով օգնել ցանկացողները՝ թող օր առաջ սկսեն իրանց մարդասէր գործունէութիւնը։»

—

ԲԱՆԱՆՑ գիւղի մեր թղթակիցը հաղորդում է մեզ, որ խօլէրայով այժմ վարակված են Գանձակ գաւառի համարեա բոլոր գիւղերը։

—

Զանգեզուրից մեզ գրում են, որ այդտեղի գիւղական ժողովուրդը գրեթէ չէ էլ դիմում այն սակաւաթիւ բժիշկներին, որոնք կան գաւառում, այլ գործ է դնում խօլէրայի դէմ մի միջոց, որը, առհասարակ, մեծ ժողովրդականութիւն է ստացել մեր երկրի ստորին, մանաւանդ գիւղական աղքաբնակութեան մէջ. հիւանդին ճմռում, մարդում, ջարդում են և ապա երակը կտրում ու արիւն են հանում։ Թղթակիցը լսել է, որ այդ միջոցով շատերը խօլէրայով հիւանդացածներից առողջացել են։ Իսկ Բագուի մեր թղթակիցը հաղորդում է մեզ, որ նոյն միջոցը խօլէրայով հիւանդացածների վրա գործ են դրել և Լէվէնսօնի Բագուի գործարանում. միայն այդտեղ արիւն չեն հանում, այլ միայն սաստիկ մարդում են հիւանդի մարմինը քացախով և սպիրտով, և մի և նոյն ժամանակ ճմռում ու ջարդում են մարմինը։

—

Ֆինլանդիայի Սանտ-Անդրէ քաղաքից մեզ գրում են. «Ֆինլանդիան մաքրութեան կողմից օրինակելի է. թէ քաղաքներ և թէ գիւղեր շատ մաքուր են պահվում։ Ֆինլանդացիք երբ լուր առան, որ Ռուսաստանի ներքին նահանգներում խօլէրա է երևացել, սկսեցին աւելի էլ մեծ ուշադրութիւն դարձնել մաքրութեան վրա։ Կը զարմանաք, եթէ տեսնէք գիւղական արտաքնոցները դէզինֆէկցիայի ենթարկված՝ կրի և կարբոլեան թթուի միջոցով։ Այս օրերումս ֆինլանդական լրագիրները հրատարակեցին, որ Ռուսաստանի սահմանի վրա գտնվող Տէրիօկի կայարանում 7 օրվայ կարանտին է նշանակված՝ Ռուսաստանից եկողների համար։ Թէև դժուար է ենթադրել, որ եթէ խօլէրան Պետերբուրգում անգամ յայտնվի, նա Ֆինլանդիայի սահմանով անցնի ու այս երկրում տարածվի, բայց այնու ամենայնիւ ֆինլանդացիք յամենայն դէպս պատրաստութիւններ են տեսնում սարսափելի հիւրին արժանաւոր կերպով ընդունելու համար։»

—

ՍՈՒՐԱՄԻՑ մեզ գրում են. «Ահա մի շաբաթ է ինչ այստեղ էլ երևացել է խօլէրան, որից հիւանդացան և մեռան 4 հոգի։ Հիւանդութեան երևալուց յետոյ ձեռնարկել են գիւղը մաքրելու և դրա համար ամբողջ գիւղը բաժանել են 5 մասի, որոնց մաքրութեան վրա հսկում են տեղիս զինուորական հիւանդանոցի բժիշկները։ Սրանց շնորհով է, որ Սուրամը քիչ քիչ մաքրվում է այժմ։ Տեղիս հասարակութիւնը հաւաքել է մօտ 700 բուբլի. այդ փողով պէտք է դեղեր գնվեն և վարձվեն 4 սայլեր, որոնք գիւղից պէտք է դուրս տանեն անմաքրութիւնները։ Հին թաղը, ուր մեծ մասամբ ապրում են հայերը և հրէաները՝ շատ անմաքուր է. շատ տներ կան, որոնք արտաքնոց էլ չունեն։ Այս տարի ամարանոց եկողների թիւը մեծ է. համարեա բոլոր տները վարձված են։ Եկած են մեզ մօտ և բաղուեցիք։»

—

Մեզ գրում են ՍՈՒՐԱՄԻՑ և հետևեալը. «Կենսական մթերքները, որոնք այստեղ էլ շատ էժան չեն եղել երբէք, այժմ աւելի էլ թանգացան, որովհետև հարևան գիւղերից արգելել են որ և է մթերքներ բերել։ Եղանակն այստեղ բաւական հով է. շարունակ քամի է փչում։»

—

Շատ գիւղերից մեզ անդադար գանգատվում են թէ գետերի, գետակների և առուների ջրերը անմաքուր են, թէ մեծ մասամբ թուրք գիւղական աղքաբնակութիւնն է, որ ապականում է խմելու ջուրը։ Դրան մենք շատ անգամ պատասխանել ենք և կրկնում ենք, որ ամենալաւ միջոցը ջուրն իր վարակիչ մասնիկներից ազատելու՝ այն է, որ մեր գիւղացիք ընտելանան այդ խօլէրայի ժամանակ եռացնել իրանց խմելու ջուրը։ Փառք Աստուծու, այդ տեսակ գործողութիւն մեծ ծախս չէ պահանջում. իւրաքանչիւր գիւղական տան մէջ եթէ սամովար չը կայ, գոնէ մի պղինձ էլ կայ։ Առաւօտեան կարելի է ջուրը եռացնել, ապա թողնել սառչելու և ամբողջ օրը, երբ ծարաւ է զգացվում, միայն այդ եռացրած ջուրը խմել։

—

Մեզ գրում են ԲԱԳՈՒԻՑ, որ այժմ շատերը բաղուեցիներից կրկին վերադառնում են քաղաքը մօտակայ տեղերից, որտեղ խօլէրան սկսել է այժմ աւելի սաստիկ տարածվել։ Նոյն թղթակիցը գրում է մեզ, որ բաղուաբնակ բժիշկ Իլիին, մի երկու այլ բժիշկներով և ֆելդշերներով՝ ներքին գործերի մինիստրի հրամանով ուղարկվում է Պարսկաստան, ռուսաց սահմանի մօտ՝ Սարդէվարի, Աստարադի և Մէշեդի մէջտեղ, մի ինչ որ յայտնված հիւանդութիւն հետազօտելու և որոշելու, և նրա առաջն առնելու։ Արդեօք այդ հիւանդութիւնը խօլէրա է, թէ մի այլ հիւանդութիւն՝ յայտնի չէ։

—

Մեզ գրում են ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ. «Խօլէրայի մի քանի դէպքեր էլ այստեղ եղան, ինչպէս և հաղորդված է պաշտօնապէս։ Արդէն պատրաստված է խօլէրային հիւանդանոց։ Մասնաւոր միջոցներ են ձեռք առնված խօլէրայի տարածման առաջն առնելու համար։»

—

Շուշու թեմական դպրոցի տեսուչ պ. Մաղաթեան մեզ հեռագրում է հետևեալը. «Հոգաբարձութեան նախագահի գիտութեամբ յայտնում եմ, որ «Մշակի»-ի № 81-ի մէջ տպված լուրը անհիմն է։ Ես սպասում եմ առաջարկած պայմաններիս պատասխանին։»

—

«Հիւսիսային հեռագրական գործակալութիւնը» արդէն բաւական ժամանակ է մեզ տեղեկութիւններ չէ հաղորդում այն մասին, թէ ինչ դրութեան մէջ է խօլէրան Ռուսաստանի նահանգներում։ Հասարակութիւնը մեծ հետաքրքրութեամբ տեղեկութիւններ է սպասում։

—

Հալաբարի ձրի թէյատանը այժմ սկսել են առաւօտեան այցելուներին բաժանել թէյի հետ հաց ևս։

—

«Արարատ» ամսագրում տպագրված՝ բժիշկ Զարդարեանի յօդուածը «Խօլէրայի» մասին այժմ հրատարակված է առանձին բրօշիւրով և տարածվում է ձրի։

—

«Кавказъ» լրագրին հաղորդում են, որ այս օրերս Պետերբուրգից ստացված է այն անձանց ցուցակը, որոնց պէտք է նպաստներ տրվեն Նորին Կայսերական Մեծութեան թագուհու կայսրուհու միջոցներից։ Այդ ցուցակը, յուլիսի 24-ին, Թիֆլիսի ոստիկանապետը ուղարկեց Թիֆլիսի քաղաքամասերի բոլոր պրիստաւներին վերոյիշեալ անձանցը յայտնելու և հրաւիրելու Նրանց Թիֆլիսի ոստիկանապետի դիւանատունը։

—

Լսում ենք, որ Էջմիածնի ուսումնական յանձնաժողովը թոյլատրել է գործ ածել դպրոցներում Ղազարոս Աղայեանի դասագրքերը։

—

Հալաբարում ձրի ճաշարան բանալու խնդիրը արդէն իր լուծումը ստացաւ։ Ճաշարանը բացվում է քաղաքային վարչութեան մէջ հաւաքված գումարով։ Արդէն տեղը որոշվեց, երկու-երեք օրում բոլոր պատրաստութիւնները կը տեսնվեն և այս շաբաթ կը բացվի ձրի ճաշարանը։

—

Բարեգործական ընկերութեան յուլիսի 22-ի ընդհանուր ժողովում երկու հայ խմբագիրներ ամենքին ապշեցրին իրանց խելքով և իմաստութեամբ։ Դրանցից մինը, Բրուսայի, այլ և Եգիպտոսի պատգամաւոր պ. Աբդար Ցովհաննիսեան՝ ճառախօսելով ապացուցանում էր, որ «թէյատները և ճաշարանները աւելորդ, մօդային բաներ են», իսկ միւսը՝ հերքում էր դէզինֆէկցիայի նշանակութիւնը, և առաջարկում որ Բարեգործական ընկերութիւնը «քիսաչիներ» պատրաստի և ուղարկի գաւառները, հիւանդներին մրդելու... Դրա պատասխան ժողովում, ի հարկէ, եղաւ մի ընդհանուր ծիծաղ։ Երկու հայ խմբագիրների հանճարի և խելքի այդ մարգարիտները միւս օրը տեղական ռուս լրագիրների ծաղրի և հեգնութեան առարկայ դարձան։ «Եւ այդ տեսակ կարծիքներ յայտնողները լրագիրների խմբագիրներ են», գրեց ռուսաց լրագիրներից մինը։

—

Կօջորից մեզ գրում են, որ մեր հնորհալի եր-

գիչ Շահլամեան ներկայումս Կօջօրումն է և այսօր, երեքշաբթի, յուլիսի 28-ին, մի կենցէրտ է տալու Կօջօրի բոռնդօյում։ Հասարակութիւնն անհամբեր սպասում է այդ կենցէրտին, որովհետև շատերն առիթ չեն ունեցել լսելու պ. Շահլամեանի ձայնը նրա՝ Իտալիայից վերադառնալուց յետոյ։

—

Նոյն տեղից մեզ գրում են, որ կիրակի, յուլիսի 26-ին, Կօջօրի բոռնդօյում տեղի ունեցաւ Կօջօր աւանի դումայի 10 ձայնաւորների ընտրութիւնը։ Ընտրութեան հետևանքները ցոյց տուին, որ Կօջօրի ամառանոցատէրերը շատ էլ գոհ չեն իրանց այժմեան աւանապետից։ Կօջօրի այժմեան աւանապետ պ. Խալաթեան այդ ընտրութիւնների ժամանակ մինչև անգամ ձայնաւոր չը կարողացաւ ընտրվել...։

—

«Тер. Вѣд.» լրագրի խօսքերով, յուլիսի 22-ին Վլադիկավկազից ճանապարհ է ընկել դէպի Կիսլովոդսկ շրջանի զլխաւոր գեներալ Կախանով։ Մի օր դրանից առաջ նոյն տեղն է գնացել և շրջանային բժիշկ Կրիգէր։ Ներկայումս Կիսլովոդսկումն է գտնվում Կովկասեան կառավարչապետը և բժշկական բաժնի դիրեկտօր Բագոլին։ Լրագիրը լսել է, որ իշխանութեան վերոյիշեալ ներկայացուցիչները խորհուրդ կը կազմեն՝ միջոցներ ձեռք առնելու խօլերայի տարածման դէմ։

—

Կենսական մթերքների գները մեր քաղաքում սաստիկ բարձրացել են. օրինակ 100 ձուն, որ առաջ ծախվում էր 70—75 կոպէկով, այժմ ծախվում է 1 ր. 30 կոպէկով և այլն։ Մթերքների այդ թանգութեան պատճառն այն է, որ գիւղացիք դժուարանում են Թիֆլիս գալ խօլերայի պատճառով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

—

Թէհրանից «Temps» լրագրին գրում են հետեւեալը. «Պարսից կառավարութիւնը անգլիացիների հիմնած պարսկական կայսերական բանկի միջոցով կէս միլիոն ֆունտ ստերլինգի փոխառութիւն առաւ, տարեկան 6 պրոցէնտով։ Դա պարսկական առաջին փոխառութիւնն է։ Անգլիացիները շատ աշխատեցին գլուխ բերել այդ փոխառութիւնը, որովհետև ֆինանսական այդ գործողութիւնը պարսկական կայսերական բանկի դրութիւնը կամրապնդի։ Այդ փոխառութիւնը անգլիացիներին հնարաւորութիւն կը տայ Պարսկաստանի հետ աւելի մօտիկ յարաբերութիւններ հաստատել։ Շատ հաւանական է, որ Անգլիան չուտով ճանապարհ կը գտնի միջամտելու հարկեր առնելու գործին, կամ գոնէ հարկերի մի մասը առնելու Պարսկաստանի հարաւային նահանգներում։ Ռուսաց դեսպան պ. Բիւցով, որպէս ասում են, խորհուրդ էր տալիս Շահին վճարել կէս միլիոն ֆունտ ստերլինգը իր սեփական գանձարանից։ Շահը, դժբաղդաբար, չընդունեց այդ խելացի խորհուրդը։ Պարսից գանձարանը մէկ վիր է նման. նա, այսինքն գանձարանը, ընդունում է, բայց չէ վճարում։ Հեղինակաւոր անձանց գնահատութեան համեմատ, պարսկական գանձարանում պահված են մօտ 130 միլիոն ֆրանկ ոսկէ և արծաթէ դրամներ և համարեա 120 միլիոն ֆրանկի արժողութեան թանգագին քարեր։ Այդպիսի պայմաններում, 6%-ական փոխառութիւնը իւրաքանչիւր եւրօպացուն անմիտ գործ կերևար։ Արևելքում բոլորովին ուրիշ կերպ են դատում։ Արևելցիները գանձարանի իւրաքանչիւր ծախսը ուղղակի վնաս են համարում, այն լինչ փոխառութիւնը, որը պէտք է վճարվի երկար ժամանակվայ ընթացքում, նրանց շատ հաճելի է երևում։ «Ալլահը մեծ է, նրան է միայն յայտնի ապագան», ասում են նրանք։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յուլիսի։ «Волгаръ» լրագիրը հաղորդում է, որ Թագաժառանգ Յէսարեվիչ առանձին մասնաժողովի դումարներից 50,000 ռուբլի յատկացրեց Նիժնիյ-Նովգորոդի ժողովրդին սանիտարական և բարեգործական օգնութիւն ցոյց տալու համար։—Լրագրական տեղեկութիւններին նայելով, հիմնվում է մի յանձնաժողով հունձերը պարտաւորացուցիչ կերպով ապահովագրելու նախագիծը մշակելու նպատակով։

ԲԵՐԼԻՆ, 25 յուլիսի։ 1,780,000 մարկ վատնելու համար նախկին կասիր եղէր Ֆրանկֆուրտի (Մայնի վրա) դատարանի կողմից դատապարտվեց 10 տարվայ բանտարկութեան։—«Nat. Zeit.» լրագրի խօսքերին նայելով՝ պրուսական և կայսերական վարչութիւնների պաշտօնեաները կը սկսեն խորհրդակցել՝ Ռուսաստանի հետ բանակցութիւններ անելու համար՝ մաքսային հարցերի վերաբերմամբ։ Կը նախագահէ ֆինանսների մինիստր Միկել։—Այսօր Բերլինի վրայով անցաւ իշխան Բիսմարկ։ Ժողովուրդը կայարանում նրան աղմկալի ցոյցեր արեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յուլիսի։ Բժշկական դէպարտամենտը հրաւէր է կարդում երկու սեռի ռուս հպատակներին, որոնք իրանց բժշկական ուսումը աւարտել են արտասահմանում, օգնելու Ռուսաստանում խօլերայից հիւանդացողներին։—Երկրագործութեան դէպարտամենտի ձեռքով մինչև յուլիսի 15-ը հաւաքած տեղեկութիւններին նայելով, ընդհանուր առմամբ, եւրօպական Ռուսաստանի համար՝ ներկայ հունձը, ինչպէս հաճարի, նոյնպէս և միւս հարահատիկների, ոչ թէ միայն բաւական կը լինի ներքին գործածութեան համար, այլ և աւելորդ պիտի մնայ։—«Гражданинъ» լսել է, որ հրամայված է քաղաքային նոր պօլօժէնիէն անյապաղ իրագործել մայրաքաղաքներում և նահանգական քաղաքներում, իսկ գաւառական քաղաքներում՝ եկող տարվանից։

ՊԱՐԻԶ, 26 յուլիսի։ Ֆէրնանդօ ցիրկում տեղի ունեցաւ միտինգ՝ բողոքելու Սոֆիայի մահվան պատիժների դէմ։ Հաւաքվեցան մօտ 2,000 մարդ. բուլանժեան դէպուտատներ Միլվոզա, Ռուսսօ և Ռօշ ճառեր խօսեցին։ Նիստը աղմկալի էր։ Վճիռ է կայացված, որով յանդիմանում են Ստամբուլովին և Կօբուրգեան պրինցին։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յուլիսի 24-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	98	ր.	40 կ.
Բերլին վրա 100 մարկ — . .	48	ր.	15 »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	39		— »
Ոսկի — — արժէ . .	7	»	90 »
Մաքսայի կուպօններ — . .	158	»	25 »
Արծաթ — — — . .	1	»	10 »
Բօրսային դիսկօնտներ — . .	4	»	5½ »
Պետ. բանկի 5% տօմս 1 շրջանի . .	103	»	87 »
— — — — 2-րդ — . .	103	»	25 »
— — — — 3-րդ —	—	»	— »
— — — — 4-րդ —	—	»	— »
— — — — 5-րդ —	—	»	— »
— — — — 6-րդ —	102	»	75 »
6% ոսկեայ ընտա	160	»	50 »
4% ոսկեայ փոխառութիւն. . . .	—	»	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	—	»	— »
— — — 2-րդ —	102	»	75 »
— — — 3-րդ —	104	»	37 »
Ներքին 5% առաջին փոխառութ.	235	»	25 »
— — երկրորդ —	223	»	25 »
Պետական երկաթուղային ընտա.	104	»	— »
5½ ընտա	—	»	— »
4% ներքին փոխառութեան . . .	95	»	37 »
5% դրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	102	»	38 »
Ազն. կալ. բանկի խաղարկութեան դրաւ. թղթ. — — .	193	»	25 »
5½% վկայակ. դիւղ. հող. բանկի.	105	»	25 »
4½% դրական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մեռալ. .	155	»	50 »
— — — թղթադ. .	102	»	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները. .	101	»	75 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101	»	25 »
Օդէսայի — — .	101	»	87 »
Թիֆլիսի — — .	98	»	75 »
Դրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	102	»	75 »
— — Քութայիսի — .	102	»	75 »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խնդրում եմ Անդրկասպեան երկրում ապրող այն հայերին, որոնց յայտնի է իմ եղբօր՝ Կարապետ Անտոնեան Տէր-Աբրահամեանցի տեղը, բարեհաճեն յայտնել „Մշակի“ խմբագրութեանը։ Նա գտնվում էր Մերվ, Զարջու և Կերկի։ Արհեստով պօրտնօյ էր։

№ 82 Մկրտիչ Տէր-Աբրահամեանց 2—5

ՍԱՐՊԻՆԿԱՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆ

Թիֆլիս, Սօլօլակսկայա փողոց, տուն Աղաբաբովի, Ամառնային զորձնական հիւսուածքներ, ձեռքի պատրաստութեան՝ տիկինների զգեստների, մանուկների զգեստների և պարոնների շապիկների համար։

Մեծ ընտրութիւն լայն սարպինկաների՝ նախշով։

Սարպինկայի զուլպաների թել, սադա, գոյնզգոյն։ Ներկերը տևողական են։

Սարպինկայի զգեստներ արկղներում 3 ռուբլուց սկսած մինչև 60 կոպէկ։

Սարպինկայի իւբկաներ 1 ր. 80 կ. և աւելի թանգ։

Սարպինկայի քթի աղլուխներ և գլխի թաշկինակներ։

ՖԱԲՐԻԿԱՆՏՆԵՐ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԲԷՆԴԷՐ ԵՒ ՍՏԵՊԱՆՕՎ

(№ 47) 27—30

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Հ. Յ. ՕՐԲԷԼԻ

Սօլօլակսկայա փողոց, սեփական տունը №№ 15—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան 12 ժամից մինչև 2 ժ. և երեկոյեան 5 ժամից մինչև 7 ժ.

Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ։

(№ 145) 72—150

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ դեղերի, մրթին գեղեցկացնող և հոտաւէտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և տնտեսական գործիքների, բացված է Կուկիայում, Վօրոնցօվի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ։

(№ 67) 10—100 (ռ. շ.)

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՅԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ հրաւիրում է ՄԻ ՀԱՄԱՍԱՐԱՆԱԿԱՆ ուսուցիչ Մաթեմատիկայից, 22 դասի համար, 50-ական ռուբլի դասավճարով, մի ուսուցիչ առաջին նախակրթարանի 18 դասի համար, տարեկան 400 ռուբլի ռոճկով, նոյնպէս մի անձն դպրանոցի վերակացութեան և հոգաբարձական քարտուղարի պաշտօնը վարելու համար, տարեկան 400 ռուբլի ռոճկով։

Ցանկացողները պէտք է դիմեն հոգաբարձութեանը մինչև օգոստոսի մէկը. Эривань, въ Армянскую Семинарію.

(№ 79) 3—3

ԽՐԻՄԵԱՆ

կենսագրական տեսութիւն (պատկերով)

Թ. ՄԱԼՈՒՄԵԱՆԻ

Գնել կարելի է գրավաճառանոցներում։ Գինն է 40 կ.։ Օտար քաղաքներից դիմել հեղինակին, „Մշակի“ խմբագրատուն։

(№ 45) 5—5

Մամուլի տակից լոյս տեսան Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերութեան հետևեալ հրատարակութիւնները.

I

Ց. Ց. Պարոնեան

1) ՀՈՍՀՈՍԻ ՁԵՌԱՏԵՏՐԸ, 2) ՊՏՈՑՏ ՄԸ ՊՕԼՍՈՑ ԹԱՂԵՐՈՒ ՄԷՋ, և 3) ԹԻԿԱՐԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ

(մի հատորի մէջ ամփոփված)

Գինն է 1 ռուբլի

և II

ժողովրդագրական նիւթեր

Գիրք ա.

ՍԱՍՆԱՑ ԾՌԵՐ, ՍԱՍԻՒՆՅԻ ԴԱՒԻԹ.

ժողովրդական վէպի երկու նոր վարիանտներ (աբարանի և մոկայ բարբառներով)

Գրի առաւ Գարեգին սարկաւագ

Գինն է 50 կոպէկ։

Ինձ հետ գրակցողներից խնդրում եմ իրանց թղթերը, հեռագրերը ուղարկել Ալէքսանդրօպոլ մինչև օգոստոսի վերջը, այնուհետև՝ Երևան։

3—3 (№ 80) Թեմական տեսուչ՝ ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՑ ՄԵԼԵԱՆՑ

ԷԼԷԿՏՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ոյժի հասցնելը տարածութեան վրա.

ՏԵԼԵՖՕՆՆԵՐԻ ՍԱՐՔԵԼԸ.

Էլէկտրական նշաններ.

ԶԱՆԳԱԿՆԵՐ

ԳԱԼՎԱՆՕՊԼԱՍՏԻԿԱ.

Էլէկտրօլիզ,

Ակումուլատորներ, Էլէմենտներ,

ՇԱՆԹԱՐԳԵԼՆԵՐ.

Նախահաշիւներ և ծրագիրներ ձրիաբար.

(91—№ 5)

ԷԼԷԿՏՐՕՆ

ԳԼԷԲՕՎ եղբայրների

ՐՕՍՏՕՎ (Դօնի վրա)

Մեծ Սադովայա փողոց, 24

РОСТОВЪ (на Дону)

БР. ГЛѢБОВЫ

Большая Садовая, 24.

ԳԱԶԱՑԻՆ ՆՈՐ ՇԱՐԺԻՉՆԵՐ

Օտտօ սիստեմայի, որոնք իրանք իրանց են ուղղում ու օծում։

Գազի համար — ածուխից,

— — — նաւթից,

— — — անտրացիտից,

— — — կէրոսինից

1/2-ից մինչև 120 ձիաւ ոյժի։

Շոգեմեքենաներ մեծ արագութեան.

76—100 (ռ. շ.)

Дозволено цензурою, Тифлисъ, 27 Іюля 1892 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.